# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**N 46- Ա** **29 մարտի 2016 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 68-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.15-րդ կետերի դրույթներով

***կարգադրում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի <<Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 68-Ա կարգադրության մեջ կատարել փոփոխություն՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար անհրաժեշտ եզրակացություն տրամադրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Ռ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ

Համբարձումյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ստեփանյան Է. – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ

Էլիզբարյան Ս. – ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի տեղակալ /համաձայնությամբ/

Մելքոնյան Ս. – ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/

Բարսեղյան Ա. – ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/

Սհոյան Հ. – ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի <<Գավառ>> ՋՕԸ-ի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ